Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04 հունիսի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ5/0213/05/21 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշումը,

ՊԱՐԶԵՑԻՆՔ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Գոհարիկ Զաքարյանը 2021 թվականի սեպտեմբերի 30-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրու համայնքապետարանի և Գյումրի համայնքի ավագանու՝ Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 154-Ա որոշումը՝ Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասն աճուրդով օտարելու և օտարման պայմաններ սահմանելու մասով, անվավեր ճանաչելու, 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը և

որպես հետևանք՝ 2021 թվականի հուլիսի 29-ի թիվ 49 արձանագրությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ հայցադիմումը՝ Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 154-Ա որոշումը՝ Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասն աճուրդով օտարելու և օտարման պայմաններ սահմանելու մասով, 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, ընդունվել է վարույթ, իսկ 2021 թվականի հուլիսի 29-ի թիվ 49 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

3. ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 17-ի վճռով Գոհարիկ Զաքարյանի հայցը մասնակի՝ 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, բավարարվել է, իսկ մնացած մասով հայցը մերժվել է:

4. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ պատասխանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է ամբողջությամբ, իսկ երրորդ անձ Լադիկ Ղազարյանի ներկայացուցիչ Թամարա Յայլոյանի ներկայացրած վերաքննիչ

բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ թիվ ՎԴ5/0213/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 17-ին կայացրած վճիռը՝ հայցը մասնակի բավարարելու՝ բողոքարկված և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանվել և այդ նույն մասով սույն վարչական գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

5. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

6. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

7. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի մայիսի 20-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ, 21-րդ հոդվածներին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 7-րդ մասին, 63-րդ հոդվածին, 65-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 67-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերին, 128-րդ հոդվածի 1-ին մասին, 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 129-րդ հոդվածի 1-2-րդ մասերին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին, 80-րդ հոդվածի 1-ին մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 19-րդ կետերին, 53-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ կառավարության «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող

հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված Կարգի 1-ին, 17-րդ, 30-րդ կետերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը գտնում է, որ համայնքային հողամասն աճուրդային եղանակով օտարելու շուրջ ծավալվող իրավահարաբերություններում թեև մի կողմում հանդես է գալիս inter alia հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ համայնքը, այդուհանդերձ, վերջինս տվյալ իրավահարաբերություններում դրսևորվում է որպես քաղաքացիաիրավական շրջանառության մասնակից, իսկ նշված իրավահարաբերության բովանդակությունը կազմում է ոչ թե հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այլ քաղաքացիաիրավական շրջանառության մասնակցի կողմից իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ, օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող եղանակով տնօրինելու իրավունքի իրացումը՝ աճուրդի կազմակերպման միջոցով, ուստի հիշյալ իրավահարաբերությունը ծագում է ոչ թե հանրային, այլ համայնքի՝ որպես քաղաքացիաիրավական շրջանառության մասնակցի, մասնավոր շահի իրացման (հողամասի օտարման պայմանագրի կնքման) կապակցությամբ:*

Տվյալ դեպքում Դատարանը փաստում է, որ գործի նոր քննության ծավալում ներառված հայցապահանջներով հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խաճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանն արձանագրում է, որ վերը իրականացված վերլուծությունն ամբողջությամբ վերաբերելի է 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդային ընթացակարգին, ինչը հայցվորը վիճարկում է առաջին հիմնական պահանջով, իսկ ինչ վերաբերում է հիմնական երկրորդ պահանջով վիճարկվող իրավական ակտին, այն է՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշմանը, ապա անհրաժեշտ է փաստել, որ այն ուղղակի հետևանք է 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդի և չի կարող տարանջատվել նույն գործընթացից, քանի որ դրանով ընդամենը Լադիկ Սերժիկի Ղազարյանին է հանձնվել հողամաս՝ հիմք ընդունելով հողամասի օտարման աճուրդում վերջինիս՝ հաղթող ճանաչվելու փաստական հանգամանքը, հետևաբար պետք է փաստել, որ հիմնական պահանջներով Դատարանի առջև բարձրացված վեճն ամբողջությամբ ծագել է ոչ թե հանրային իշխանական լիազորություններով օժտված վարչական մարմնի կողմից հանրային շահի իրացման առնչությամբ որևէ հարցի կարգավորման կապակցությամբ, այլ մասնավոր իրավունքի ոլորտում՝ իրավահավասար սուբյեկտների կողմից պայմանագիր կնքելու (սակարկություններ կազմակերպելու) առնչությամբ:

Ողջ ասվածի համատեքստում Դատարանը ներքին համոզմունք է ձևավորում առ այն, որ սույն գործը, որի լուծման արդյունքում կարող են վերականգնվել հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքները, բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից, քանի որ գործի հիմքում դրված և Դատարանի քննությանը վերապահված վեճը թեև ֆորմալ առումով ձևակերպված է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի դեմ, այդուհանդերձ, բովանդակային առումով ամբողջովին վերաբերում է իրավահավասար սուբյեկտների միջև իրենց քաղաքացիական իրավունքների իրացման (սակարկությունների միջոցով պայմանագրի կնքման) կապակցությամբ ծագած վեճի լուծմանը, ինչը որևիցե կերպ կապված չէ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կողմից իր իշխանական-կարգադրիչ

գործունեության իրականացման հետ, չունի հանրային բնույթ, ուստիև ենթակա է լուծման մասնավոր իրավունքի նորմերի շրջանակում»[1]:

9. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 12-րդ հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, 19-րդ հոդվածին, 53-րդ հոդվածի 1-ին մասին՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 15-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Տվյալ դեպքում Դատարանն արձանագրում է, որ սույն գործով ի սկզբանե ներկայացված են եղել երեք հիմնական պահանջներ՝ Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 154-Ա որոշումը, 2021 թվականի հուլիսի 29-ի աճուրդը և Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջներ, ինչպես նաև՝ առուվաճառքի պայմանագիրը և իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին ածանցյալ պահանջներ:*

Դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործի ենթակայության հարցը քննարկվել է և գործն ամբողջությամբ քննվել է ՀՀ վարչական դատարանում, իսկ 2022 թվականի փետրվարի 17-ին կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վճիռ: Նշված վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վերաքննիչ բողոքը քննելու արդյունքում իր պասիվ համաձայնությունն է տվել սույն գործի ենթակայությանը, հակառակ դեպքում ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի փետրվարի 17-ի վճիռը կբեկանվեր ՀՀ

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 4-րդ, թերթեր 77-88:

վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված՝ անվերապահ բեկանման հիմքով: Սակայն ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը նշված վճիռը՝ բողոքարկված մասով, բեկանել է այլ հիմքով և այդ մասով գործն ուղարկել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: Իսկ չբողոքարկված մասով սույն գործով 2022 թվականի փետրվարի 17-ին կայացված վճիռը մնացել է օրինական ուժի մեջ:

Այսպիսով, անկախ այն հանգամանքից, թե ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ նոր քննության ուղարկված մասով պահանջները ենթակա են քննության վարչական, թե ընդհանուր իրավասության դատարանում, Դատարանը գտնում է, որ սույն գործի ենթակայությունը չի կարող փոխվել, քանի որ Դատարանի գնահատմամբ սույն գործն ի սկզբանե ենթակա է եղել քննության ՀՀ վարչական դատարանում»[2]:

10. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ պատասխանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է ամբողջությամբ, իսկ երրորդ անձ Լադիկ Ղազարյանի ներկայացուցիչ Թամարա Յայլոյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ թիվ ՎԴ5/0213/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի փետրվարի 17-ին կայացրած վճիռը՝ հայցը մասնակի բավարարելու՝ բողոքարկված և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանվել և այդ նույն մասով սույն վարչական գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Ուշադրության է արժանի այն, որ Դատարանը, ըստ էության, մասնակի բավարարել է հայցվորի հայցը՝ վճռի հիմքում դնելով ոչ թե հայցադիմումում վկայակոչված հայցի հիմքերը, այլ աճուրդի կազմակերպմանն ու իրականացմանն առնչվող ընթացակարգային որոշակի խախտումները, որոնք ներառված չէին հայցվորի հայցի հիմքի շրջանակում և վիճարկվող աճուրդին մասնակցելու հայցվորի ցանկության ու ենթադրյալ իրավունքների, օրինական շահերի խախտման մասին հայցվոր կողմը որևէ նշում չի կատարել հայցադիմումով. հայցվորի սույն գործով իրավական շահագրգռվածությունը պայմանավորված է*

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 4-րդ, թերթեր 102-104:

եղել բացառապես իր ենթադրյալ նախապատվության իրավունքի խախտման հիմքով, ինչը հերքվել է Դատարանի վճռով, այլ ոչ թե կայացած ածուրդին իր մասնակցության ցանկությամբ: Մինչդեռ, դեռևս գործը դատաքննության նախապատրաստելիս Դատարանը, ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի հրամայական պահանջներով, պետք է կատարեր նույն օրենսգրքի 5-րդ հոդվածից բխող մատնանշման դատավարական պարտականությունը, ինչը սակայն այդ դեպքում տեղի չի ունեցել:

Մասնավորապես, վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում Դատարանը, անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքերից, պետք է մատնանշեր նաև ողջամտորեն հնարավոր բոլոր այն իրավական նորմերը, որոնց խախտումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտի անվավերության համար, և առաջարկեր հայցվորին դրանք համալրել համապատասխան փաստական տվյալներով: Եթե հայցվորը գտներ, որ Դատարանը վարչական ակտի իրավաչափությունը պետք է ստուգի ամբողջ ծավալով, վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում Դատարանը պարտավոր էր ձեռնարկել ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վարչական ակտերի ու ածուրդի իրավաչափությունն ամբողջ ծավալով գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներն ու տեղեկությունները ձեռք բերելու ուղղությամբ: Իսկ եթե հայցվորը Դատարանի կողմից մատնանշման լիազորության իրականացումից հետո պնդեր իր սկզբնական պահանջը՝ ներկայացված փաստական հանգամանքների շրջանակներում, Դատարանը գործի հետագա քննությունը պետք է իրականացներ և գործն ըստ էության լուծող դատական ակտում վարչական ակտերի ու ածուրդի իրավաչափությունը գնահատեր միայն այդ իրավական և փաստական հիմքերի շրջանակներում:

(...)

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը համարում է, որ սույն գործով ՀՀ վարչական դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հատկապես 5-րդ և 89-րդ հոդվածների պահանջների խախտումը կարող

է հանգեցնել գործի սխալ լուծման, քանի որ սույն գործի լուծման համար Դատարանի կողմից համարժեք միջոցներ ձեռնարկվելու, մասնավորապես, մատնանշման պարտականությունը պատշաճ կատարելու դեպքում, կապահովվեր հայցվորի արդար դատաքննության իրավունքը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը փաստում է, որ տվյալ պարագայում առկա են Դատարանի դատական ակտը հայցը մասնակի բավարարելու բողոքարկված մասով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական իրավունքի նորմերի խախտման ուժով բեկանելու անհրաժեշտ և բավարար հիմքեր:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործի քննության ընթացքում Դատարանը, ելնելով գործող օրենսդրական կարգավորումներից, պետք է ձեռնարկեր բոլոր համարժեք և հնարավոր միջոցները՝ պատշաճ կատարեր Դատարանի մատնանշման պարտականությունը՝ դրանով իսկ ապահովելով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության իրականացումը, ինչը, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, կարող է իրագործվել գործի նոր քննության արդյունքում:

Հայցի հիմքերը հստակեցնելու և անհրաժեշտության դեպքում լրացնելու հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ վճռով հաստատված նախապատվության իրավունքի բացակայության պայմաններում Դատարանը պետք է պարզի նաև հայցվորի շահագրգիռ լինելու հանգամանքը՝ բացահայտելով, թե հայցվորի կոնկրետ ո՞ր իրավունքն է խախտվել կայացված ածուրդի արդյունքում:

(...)

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով 2022 թվականի փետրվարի 17-ին կայացված վճիռը՝ հայցը մասնակի բավարարելու բողոքարկված մասով, ենթակա է բեկանման, իսկ սույն վարչական գործը նույն այդ մասով պետք է ուղարկել ստորադաս դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության»[3]:

[3] Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 141-166:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

11. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի եզրահանգումն այն մասին, որ թիվ ՎԴ5/0213/05/21 գործն ըստ Գոհարիկ Զաքարյանի հայցի ընդդեմ Գյումրու համայնքապետարանի և Գյումրի համայնքի ավագանու, երրորդ անձինք Լադիկ Ղազարյան և Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային սպորաբաժանում՝ 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

12. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սփորադաս դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վերադաս դատարանի որոշման հիման վրա՝ վերադաս դատարանի սահմանած ծավալով»:*

12.1. Վճռաբեկ դատարանը, *Գառնիկ Մուրադյանը (իրավանախորդ՝ Եղիշ Մուրադյան) ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի (իրավանախորդ՝ Արևաշողի գյուղապետարան* ՝ վարչական գործով 2024 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ եզրահանգել է. *«(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերադաս դատարանին ուղղված իմպերատիվ պահանջ է գործը նոր քննության ուղարկելու լիազորությունը կիրառելիս հստակ սահմանել նոր քննության ծավալը՝ ապառիչ կերպով նշելով վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստերի շրջանակը, որոնք ենթակա են պարզման գործի նոր քննության վարույթում, իսկ գործի նոր քննությունն իրականացնող դատարանին ուղղված իմպերատիվ պահանջ է գործի նոր քննությունն իրականացնել վերադաս դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալով՝ սահմանափակվելով ապացուցման ենթակա այն փաստերի շրջանակով, որոնք գործի նոր քննության ծավալում ներառել է վերադաս դատարանը: Գործի նոր քննության վարույթում վերադաս դատարանի սահմանած ծավալից դուրս գալու դեպքում կխաթարվեն ինչպես նոր քննության վարույթի նպատակն ու էությունը, այնպես էլ իրավական որոշակիության ու կանխատեսելիության սկզբունքները, այդ թվում՝ վերջիններիս կարևոր բաղադրիչ հանդիսացող res judicata սկզբունքը:*

(...) նոր քննության վարույթում ապացուցման առարկայի շրջանակը պայմանավորված է վերադաս դատարանի կողմից սահմանված նոր քննության

ծավալով: Նոր քննության վարույթում ապացուցման առարկան չի ներառում այն փաստերը, որոնք դուրս են ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից սահմանված նոր քննության ծավալից»[4]:

Վճռաբեկ դատարանը, *ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Ջարիկ Գարուշի Գևորգյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտե* ՝ գործով 2023 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ անդրադառնալով մարզպետի որոշման հիման վրա պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին վեճի՝ հանրային կամ մասնավոր իրավահարաբերություններից ծագելու հարցին, եզրահանգել է. *«(…) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սակարկություններ անցկացնելու, դրանց արդյունքում պայմանագրեր կնքելու կամ դրանք անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու կարգը և հիմքերը սահմանվում և կարգավորվում են քաղաքացիական իրավական նորմերով, իսկ սակարկությունների մասնակիցներն իրավահարաբերության մեջ են մտնում մասնավոր կամքի ինքնավարությամբ, ինչն ինքնին բացառում է սակարկություններին մասնակցող անձանց վարչական կամ իշխանական և ընդհանրապես որևէ ենթակայության ներքո գտնվելու հանգամանքը:*

(…)

Վերոգրյալից հետևում է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: Վարչական մարմինը որոշակի իրավահարաբերության մեջ կարող է ներկայանալ ոչ միայն որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին, այլ նաև որպես փոխյալ իրավահարաբերության մյուս մասնակիցներին հավասար սուբյեկտ (մասնավոր ինքնավարություն): Ի

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գառնիկ Մուրադյանը (իրավանախորդ՝ Եղիշ Մուրադյան) ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի (իրավանախորդ՝ Արևաշողի գյուղապետարան՝* վարչական գործով 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ ՎԴ/3692/05/15 որոշումը:

տարբերություն հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկություններում որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, ով գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից[5]:

13. Նախորդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ընդ որում, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման աճուրդն անվավեր ճանաչելու պահանջը բխում է մասնավոր իրավահարաբերություններից, քանի որ սակարկություններ անցկացնելու, դրանց արդյունքում պայմանագրեր կնքելու կամ դրանք անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու կարգը և հիմքերը սահմանվում և կարգավորվում են քաղաքացիական իրավական նորմերով, իսկ սակարկությունների մասնակիցներն իրավահարաբերության մեջ են մտնում մասնավոր կամքի ինքնավարությամբ, որպիսի պարագայում նշված իրավահարաբերություններում հանրային տարրի առկայությունը բացառվում է:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

---

[5] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Ջարիկ Գարուշի Գևորգյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտեի՝* գործով 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21 որոշումը:

- Գոհարիկ Զաքարյանը 2021 թվականի սեպտեմբերի 30-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրու համայնքապետարանի և Գյումրի համայնքի ավագանու՝ Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 154-Ա որոշումը՝ Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը աճուրդով օտարելու և օտարման պայմաններ սահմանելու մասով, անվավեր ճանաչելու, 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը և որպես հետևանք՝ 2021 թվականի հուլիսի 29-ի թիվ 49 արձանագրությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին[6],

- ՀՀ վարչական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ հայցադիմումը՝ Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 154-Ա որոշումը՝ Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասն աճուրդով օտարելու և օտարման պայմաններ սահմանելու մասով, 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, ընդունվել է վարույթ, իսկ 2021 թվականի հուլիսի 29-ի թիվ 49 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժվել է[7]:

- ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 17-ի վճռով Գոհարիկ Զաքարյանի հայցը մասնակի՝ 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով

[6] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, բավարարվել է, իսկ մնացած մասով հայցը մերժվել է[8]:

- ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ պատասխանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է ամբողջությամբ, իսկ երրորդ անձ Լադիկ Ղազարյանի ներկայացուցիչ Թամարա Յայլոյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ թիվ ՎԴ5/0213/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 17-ին կայացրած վճիռը՝ հայցը մասնակի բավարարելու՝ բողոքարկված և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանվել և այդ նույն մասով սույն վարչական գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության՝ արձանագրելով, որ գործի քննության ընթացքում Դատարանը, ելնելով գործող օրենսդրական կարգավորումներից, պետք է ձեռնարկեր բոլոր համարժեք և հնարավոր միջոցները՝ պատշաճ կատարեր դատարանի մատնանշման պարտականությունը՝ դրանով իսկ ապահովելով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության իրականացումը, ինչը կարող է իրագործվել գործի նոր քննության արդյունքում: Հայցի հիմքերը հստակեցնելու և անհրաժեշտության դեպքում լրացնելու հետ մեկտեղ վճռով հաստատված նախապատվության իրավունքի բացակայության պայմաններում Դատարանը պետք է պարզի նաև հայցվորի շահագրգիռ լինելու հանգամանքը՝ բացահայտելով, թե հայցվորի կոնկրետ ո՞ր իրավունքն է խախտվել կայացված աճուրդի արդյունքում[9]:

- ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի սահմանած գործի նոր քննության ծավալի շրջանակում ՀՀ վարչական դատարանը թե՛ գործի նախապատրաստական և թե՛ դատաքննության փուլերում հրավիրված դատական նիստերի ընթացքում պարզել է հայցի առարկան և հիմքերը, որոնց արդյունքում հայցվորի ներկայացուցիչը պնդել է, որ նախապատվության իրավունքի խնդիր առկա չէ, իր

[8] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

նպատակը իրականացված աճուրդի և դրա հետևանքների անվավերությանը հասնելն է, և հայցվորը զրկված չէ հետագայում հայցի հնարավոր բավարարման պարագայում իր նախապատվության իրավունքը ճանաչելու և վեճի առարկա գույքն ուղղակի վաճառքի միջոցով ձեռք բերելու հնարավորությունից: Միաժամանակ, հայցվորի ներկայացուցիչը, դատական նիստերի ընթացքում լրացնելով հայցի հիմքերը, ներկայացրել է նաև աճուրդի իրականացման ընթացքում թույլ տրված ընթացակարգային խախտումների վերաբերյալ դիտարկումներ, մասնավորապես՝ աճուրդի հայտարարությունը օրենքով սահմանված կարգով հրապարակված չի եղել, որի հետևանքով հայցվորը տեղյակ չի եղել վեճի առարկա գույքի՝ աճուրդով իրացման մասին՝ այդպիսով զրկվելով աճուրդին մասնակցելու հնարավորությունից:

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ համայնքային հողամասն աճուրդային եղանակով օտարելու շուրջ ծավալվող իրավահարաբերություններում թեև մի կողմում հանդես է գալիս inter alia հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ համայնքը, այդուհանդերձ, վերջինս տվյալ իրավահարաբերություններում դրսևորվում է որպես քաղաքացիաիրավական շրջանառության մասնակից, իսկ նշված իրավահարաբերության բովանդակությունը կազմում է ոչ թե հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այլ քաղաքացիաիրավական շրջանառության մասնակցի կողմից իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ, օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող եղանակով տնօրինելու իրավունքի իրացումը՝ աճուրդի կազմակերպման միջոցով, ուստի հիշյալ իրավահարաբերությունը ծագում է ոչ թե հանրային, այլ համայնքի՝ որպես քաղաքացիաիրավական շրջանառության մասնակցի մասնավոր շահի իրացման (հողամասի օտարման պայմանագրի կնքման) կապակցությամբ[10],

[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

- ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 15-ի որոշմամբ գտել է, որ սույն գործի ենթակայության հարցը քննարկվել է, և գործն ամբողջությամբ քննվել է ՀՀ վարչական դատարանում, իսկ 2022 թվականի փետրվարի 17-ին կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վճիռ: Նշված վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վերաքննիչ բողոքը քննելու արդյունքում իր պասիվ համաձայնությունն է տվել սույն գործի ենթակայությանը, հակառակ դեպքում ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի փետրվարի 17-ի վճիռը կբեկանվեր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված՝ անվերապահ բեկանման հիմքով: Սակայն ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը նշված վճիռը՝ բողոքարկված մասով, բեկանել է այլ հիմքով և այդ մասով գործն ուղարկել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: Իսկ չբողոքարկված մասով սույն գործով 2022 թվականի փետրվարի 17-ին կայացված վճիռը մնացել է օրինական ուժի մեջ: Այսպիսով, անկախ այն հանգամանքից, թե ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ նոր քննության ուղարկված մասով պահանջները ենթակա են քննության վարչական, թե ընդհանուր իրավասության դատարանում, սույն գործի ենթակայությունը չի կարող փոխվել, քանի որ սույն գործն ի սկզբանե ենթակա է եղել քննության ՀՀ վարչական դատարանում[11]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ սույն գործով առկա է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով վերջինս, բեկանելով ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 17-ին կայացրած վճիռը, սահմանել է սույն գործի քննության որոշակի ծավալ: Մասնավորապես՝

1. ՀՀ վարչական դատարանը գործի նոր քննության փուլում պետք է հայցվորին մատնանշեր ողջամտորեն հնարավոր բոլոր այն իրավական նորմերը, որոնց խախտումը կարող էր հիմք հանդիսանալ աճուրդի անվավերության համար և

[11] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

առաջարկեր հայցվորին դրանք համալրել համապատասխան փաստական տվյալներով:

2. Աճուրդի իրավաչափությունն ամբողջ ծավալով քննելու անհրաժեշտության դեպքում ՀՀ վարչական դատարանը պետք է ձեռնարկեր ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վարչական ակտերի և աճուրդի իրավաչափությունն ամբողջ ծավալով գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներն ու տեղեկությունները ձեռք բերելու ուղղությամբ:

3. ՀՀ վարչական դատարանը պետք է պարզեր հայցի առարկան և հիմքերը, վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ակտերի շրջանակը, դատավարության մասնակիցների և դատավարությանը մասնակցող այլ անձանց կազմը, ապացուցում պահանջող փաստերի շրջանակը:

4. Վճռով հաստատված նախապատվության իրավունքի բացակայության պայմաններում ՀՀ վարչական դատարանը պետք է պարզեր նաև հայցվորի շահագրգիռ լինելու հանգամանքը՝ բացահայտելով, թե հայցվորի կոնկրետ որ իրավունքն է խախտվել կայացված աճուրդի արդյունքում:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի սահմանած գործի նոր քննության ծավալի շրջանակում ՀՀ վարչական դատարանը թե՛ գործի նախապատրաստական և թե՛ դատաքննության փուլերում հրավիրված դատական նիստերի ընթացքում պարզել է հայցի առարկան և հիմքերը, որոնց արդյունքում հայցվորի ներկայացուցիչը պնդել է, որ նախապատվության իրավունքի խնդիր առկա չէ, իր նպատակը իրականացված աճուրդի և դրա հետևանքների անվավերությանը հասնելն է, և հայցվորը զրկված չէ հետագայում հայցի հնարավոր բավարարման պարագայում իր նախապատվության իրավունքը ճանաչելու և վեճի առարկա գույքն ուղղակի վաճառքի միջոցով ձեռք բերելու հնարավորությունից: Միաժամանակ, հայցվորի ներկայացուցիչը, դատական նիստերի ընթացքում լրացնելով հայցի հիմքերը, ներկայացրել է նաև աճուրդի իրականացման ընթացքում թույլ տրված ընթացակարգային խախտումների վերաբերյալ դիտարկումներ, մասնավորապես՝ աճուրդի հայտարարությունը օրենքով սահմանված կարգով հրապարակված չի եղել, որի հետևանքով հայցվորը տեղյակ չի եղել վեճի առարկա գույքի՝ աճուրդով

իրացման մասին՝ այդպիսով զրկվելով աճուրդին մասնակցելու հնարավորությունից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորի ներկայացուցիչը սույն գործի նոր քննության ընթացքում լրացրել է հայցի հիմքերը՝ ներկայացնելով աճուրդի անցկացման օրենքով նախատեսված ընթացակարգին առնչվող խախտումներ ևս, հիմնվելով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21 գործով արտահայտած իրավական դիրքորոշման վրա և հաշվի առնելով, որ սույն գործով հայցի առարկան 2021 թվականի հուլիսի 29-ին Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդն անվավեր ճանաչելու պահանջն է, որպիսի հարաբերություններն ունեն մասնավոր-քաղաքացիահիրավական բնույթ, ուստի սույն գործը ենթակա է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

16. Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ5/0213/05/21 գործն ըստ Գոհարիկ Զաքարյանի հայցի ընդդեմ Գյումրու համայնքապետարանի և Գյումրի համայնքի ավագանու, երրորդ անձինք Լադիկ Ղազարյան և Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Գոհարիկ Զաքարյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ5/0213/05/21 գործը ենթակա է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ5/0213/05/21 գործն ըստ Գոհարիկ Զաքարյանի հայցի ընդդեմ Գյումրու համայնքապետարանի և Գյումրի համայնքի ավագանու, երրորդ անձինք Լադիկ Ղազարյան և Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ 2021 թվականի հուլիսի 29-ի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 5-րդ անցման թիվ 2/2 հասցեի 555.0 քմ մակերեսով հողամասը վաճառելու աճուրդը, Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1848-Ա որոշումը և որպես հետևանք՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 2021 թվականի օգոստոսի 11-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ